Դարույր Սևակ

Արմատավոր հանելուկ

Մասրենի՞ն:
-Մասրենին թե՛ թուփ է, թե՛ ծառ է:
Աճում է և՛ անհող, և՛ անջուր,
Բայց միշտ էլ ամուր ու պայծառ է:
Բուսնում է նա ժայռի ականջում,
Բուսնում է քարափի շրթունքին,
Եվ նրա ցավերով երկունքի
Ծնվում է դալարուկ մի տունկի՝
Ոչ պակաս և՛ անհող, և՛ անջուր...
-Մասրենին ո՛չ թուփ է, ո՛չ ծառ է:
Մասրենին... կապիկն է... վարդերի,
Վարդերի այբ-բեն-գիմ հեգելը...
-Մասրենին սեռերի բարդ դերի
Արտիստիկ նմուշն է: Էգերը
Մշտապես կոճկըված-հավաք են,
Մինչդեռ միշտ ճաքում են որձերը,
Եվ նրանց դալարուկ զավակը
Այդպես էլ վարելով գործերը՝
Չի մերժում իր նախնյաց փորձերը.
Նոր էգերն էլի՛ միշտ հավաք են,
Ճաքում են միշտ նորեկ որձերը...

-Մասրենին ո՛չ թուփ է, ո՛չ ծառ է,
Ո՛չ վարդ է:
-Իսկ ինչ է:
-Երևի
Մասրենին... լուսնոտն է... արևի,
Որ քայլում քիվերի վրայով,
Բնական-ժայռեղեն քիվերի,
Ու ներքև չի ընկնում իր վերից...

25.III.1967թ.
Արզնի